ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2020-2021 ուստարի)

10-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

ա) Հայոց պատմություն (20 միավոր)

1. Ո՞ր լեռներից է սկիզբ առնում Արևելյան Տիգրիս գետը. 0,5 մ.
   ա) Ծաղկավետ բ) Ծաղկանց գ) Խաչափայտի դ) Հայկական Տավրոս
2. Ո՞ր ժամանակաշրջանին են վերաբերում Արատտայի մասին տեղեկությունները. 0,5 մ.
   ա) Ք.ա. XXVIII-XXVII դդ. բ) Ք.ա. XXIII-XXII դդ. գ) Ք.ա. XXVI-XXIII դդ. դ) Ք.ա. XV-XIII դդ.
3. Որքա՞ն էր Հայասայի բանակում հետևակազորի թիվը *(նշե՛ք թվաքանակը)*. 0,5 մ.
   ա) 30000 բ) 10000 գ) 7000 դ) 20000
4. Վանի թագավորության վերջին ականավոր տիրակալն էր՝ 0,5 մ.
   ա) Ռուսա II բ) Արգիշտի II գ) Սարդուրի III դ) Ռուսա III
5. Ո՞րն էր Ալեքսանդր Մակեդոնացու տերության մայրաքաղաքը. 0,5 մ.
   ա) Պերսեպոլիս բ) Ալեքսանդրիա գ) Բաբելոն դ) Էկբատան
6. Ո՞րն էր Տիգրան Մեծի տերության տնտեսապես ամենազարգացած շրջանի մայրաքաղաքը. 0,5 մ.
   ա) Անտիոք բ) Հալեպ գ) Դամասկոս դ) Տարսոն
7. Վանի ո՞ր արքայի օրոք է արհեստավարժ բանակի կազմում առանձնացվել «արքայական գունդ»-ը.
   ա) Ռուսա I բ) Արգիշտի II գ) Սարդուրի II դ) Մենուա 0,5 մ.
8. Ո՞վ էր «լավ համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես են օտարացեղ ազգերը ոտնակոխ անում իր հայրենիքի սահմանները, և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա». 0,5 մ.
   ա) Հայկ Նահապետ բ) Արամ Նահապետ գ) Երվանդ Սակավակյաց դ) Տիգրան Երվանդյան
9. Ե՞րբ է Պարթևստանը Հայաստանին վերադարձրել «Յոթանասուն հովիտներ»-ը. 0,5 մ.
   ա) Ք.ա. 95 թ. բ) Ք.ա 92 թ. գ) Ք.ա. 88 թ. դ) Ք.ա. 87 թ.
10. Ե՞րբ է հույն զորավար և պատմիչ Քսենոփոնը անցել Հայաստանի տարածքով: 0,5 մ.
11. Ուրիշ ի՞նչ անունով է կոչվել Եկեղյաց գավառը: 0,5 մ.
12. Ե՞րբ է դավադրաբար սպանվել Արտաշես II-ը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա) Վարդանակերտի ճակատամարտ
    բ) Ակոռիի ճակատամարտ
    գ) Ճարմանայի ճակատամարտ
    դ) Արծնիի ճակատամարտ
    ե) Արյան լճի ճակատամարտ
    զ) Ներսեհապատի ճակատամարտ
    է) Արճեշի ճակատամարտ
    ը) Գուկանք գյուղի ճակատամարտ

1	2	3	4	5	6	7	8

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. Աշոտ II
    2. Աշոտ III
    3. Սմբատ I
    4. Աբաս
    5. Գագիկ I
    6. Սմբատ II

1	2	3	4	5	6

    ա. 890-914 թթ. բ. 928-953 թթ. գ. 990-1020 թթ.
    դ. 914-928 թթ. ե. 977-990 թթ. զ. 953-977 թթ.
15. Նշված գործառույթներից առանձնացրե՛ք 3-ը, որ Արշակունյաց Հայաստանում տնօրինում էր հազարապետը.
    ա) արքունի կալվածքների հսկողություն 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    բ) պետական պարհակների տնօրինում
    գ) պալատական արարողությունների կազմակերպում
    դ) քաղաքների ամրությունների կառուցում, անտառատնկումների իրականացում
    ե) արքունի գանձարանի հսկողություն
    զ) ճանապարհների և կամուրջների կառուցում, ջրանցքների անցկացում

1	2	3

է) Արշակունյաց սեպուհների դաստիարակություն
ը) դեսպանների ընդունելության և բանակցությունների կազմակերպում

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
ա) Վանի թագավորության մեջ արքային կից գործող Ավագների խորհրդի անդամները կոչվում էին «արքայի գործակալներ»:
բ) Հունա-հռոմեական պատմիչներն Արտաշես Ի-ի ստեղծած վարչամիավորները անվանում էին «պրովինցիա»:
գ) Հայ նախարարական համակարգում նախարարական տան գլխավորի՝ նահապետի ժառանգորդը կոչվում էր աշխարհակալ, իսկ մյուս ներկայացուցիչները՝ դրանիկ:
դ) Հարկատու մեկ միավոր կազմող գյուղացիական ընտանիքը կամ գերդաստանը վաղ միջնադարյան Հայաստանում կոչվում էր երդ:
ե) Հայ նախարարներից բռնագրավված տիրույթներից արաբների ստեղծած վարչաքաղաքական միավորները կոչվում էին ոստիկանություն:
զ) Միջնադարյան Հայաստանի քաղաքներում առևտրին, արհեստներին, հարկահանությանն ու շուկաներին հետևող հատուկ պաշտոնյան կոչվում էր մուհթասիբ:
է) Հայկական բանակում Բագրատունիների օրոք Հայաստանում կազմավորված արաբական ամիրայությունների տրամադրած զորամասերից, ինչպես նաև լեզգիներից և այլ ցեղերից հավաքագրված զորամիավորումը կոչվում էր «մարզպանական գունդ»:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա) Հայաստանը պառակտելու և ռազմականապես թուլացնելու նպատակով խալիֆը Հայաստանի նոր թագավոր է ճանաչել Աշոտ Երկաթի հորեղբորորդուն՝ հայոց սպարապետ Աշոտին:
բ) Գագիկ Արծրունու խնդրանքով Սմբատ Ի-ը վերանայել է իր վճիռը և Նախճավան քաղաքը վերադարձրել նրան, ինչի հետևանքով սրվել են արքայի և Սյունյաց իշխանների հարաբերությունները:
գ) Բագրատունյաց Հայաստանում եկեղեցին ապահովում էր երկրի միասնականությունը, ուստի հայոց թագավորները կաթողիկոսի ընտրության ժամանակ վճռական խոսքի իրավունքը վերապահել էին իրենց:
դ) Գագիկ Ի-ը վերացրել է Վայոց ձորի Պռոշյանների իշխանությունը և նրա տարածքը նվիրել Պահլավունիներին, որոնք այնտեղ իրականացրել են լայնածավալ շինարարական աշխատանքներ:
ե) Տաշիր-Զորագետի թագավորությունն իր հզորության գագաթնակետին է հասել Դավիթ Անհողինի՝ մոտ 60 տարի տևած կառավարման շրջանում, երբ թագավորության տարածքը զգալիորեն ընդարձակվել է Տփղիսի և Գանձակի ամիրայությունների հաշվին:
զ) Հայոց կաթողիկոսի թեկնածու Ներսես Մեծին Պապը թույլ չի տվել մեկնել Կեսարիա, այլ նա կաթողիկոս է ձեռնադրել և օծել Հայաստանում, որով էլ հաստատվել է Հայոց կաթողիկոսական աթոռի սկզբնական ինքնուրույնությունը:
է) Պատմական աղբյուրների համաձայն՝ XI դ. սկզբին Վասպուրականն ուներ 8 քաղաք, 72 ամրոց ու բերդ, 115 վանք և 4000 գյուղ, իսկ բնակչության թիվը հասնում էր մոտ 1 միլիոնի:
ը) Բագրատունյաց ժամանակաշրջանում դաշտավարության մեջ կարևոր նորույթ էր երկաթե խոփով ծանր գութանի տարածումը, որն օգտագործվում էր խոշոր տնտեսություններում և խոպան հողերը յուրացնելիս:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)
Թագավորական իշխանության ամրապնդման և նախարարական կենտրոնախույս տրամադրությունները զսպելու նպատակով Արշակ Երկրորդը սկսում է Արշակավան քաղաքի կառուցումը Ուտան Հայոց գավառում:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
«... հնում Կեսարիայի ուրիշ տասը քաղաք մերն են եղել, ե՛տ տուր, Ուռհա (Եդեսիա) քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուստի, եթե չես ուզում, որ խռովություն ծագի մեր մեջ, ե՛տ տուր»:
ա. Ո՞ր պատմիչի աշխատությունից է մեջբերումը:
բ. Հայոց արքան ո՞ւմ է ներկայացրել վերոհիշյալ տարածքային պահանջները:
գ. Նշյալ պահանջները ներկայացրած հայոց արքան որքա՞ն էր դարձրել հայոց բանակի թիվը:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
Միջագետքյան դյուցազնավեպում անմահություն փնտրող հերոս ...-ը (1) բռնում է «ճանապարհը դեպի Արատտա», գնում ...-ի (2) հոսանքն ի վեր և ճանապարհին հաղթահարում ... (3) լեռները:

21. Տրամաբանական խնդիր. 1 մ.
Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 7200 տարեկան է, նախնադարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է ստեղծվել:

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:
բ. Ո՞ր աշխարհն է նրան սահմանակցում հյուսիսում:

23. Տիգրանյան թագով ո՞ր արքայի քանդակն է նկարի ձախ կողմում. 0,5 մ.

24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ (պատասխանե՛ք տրված հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր միապետն է պատկերված նկարում:
բ. Ո՞ր թվականների իրադարձությունների համար է ծաղրանկարիչը միապետին անվանում «մսագործ»:

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Խեթական արքա Խաթուսիլիս III-ը Եգիպտոսի ո՞ր փարավոնի հետ է կնքել հաշտության պայմանագիր.
   ա) Ամենհոտեպ IV բ) Թութմոս III գ) Ռամզես II դ) Յահմոս I 0,5 մ.
2. Պարսից արքայի և Աթենքի դեսպան Կալիասի միջև որտե՞ղ է կնքվել հաշտության պայմանագիր.
   ա) Շոշ բ) Էկբատան գ) Աթենք դ) Պերսեպոլիս 0,5 մ.
3. Ո՞ր քաղաքում է կառուցվել առաջին զիկկուրատը.
   ա) Բաբելոն բ) Ուր գ) Ուրուկ դ) Լագաշ 0,5 մ.
4. Ե՞րբ է գահակալել Հուստինիանոս I կայսրը.
   ա) 556-572 թթ. բ) 527-565 թթ. գ) 531-578 թթ. դ) 486-511 թթ. 0,5 մ.
5. Որտե՞ղ է գտնվում Ռամզես II-ի՝ նշանավոր ժայռափոր տաճարը, որտեղ տեղադրված են 20-ական մետր բարձրությամբ նրա 4 արձանները: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
   1. Չուդ լճի ճակատամարտը
   2. Կուլիկովոյի ճակատամարտը
   3. Կոսովոյի ճակատամարտը
   4. Դելիի սուլթանության կործանումը

1	2	3	4

   ա. 1389 թ. բ. 1242 թ. գ. 1526 թ. դ. 1380 թ.
7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
   ա) 1258 թ. մոնղոլները գրավել են Բաղդադ քաղաքը և կործանել Աբասյանների խալիֆայությունը:
   բ) Ք.ա. 171 թ. Թրակիայի Կինոսկեֆալե կոչվող վայրում հռոմեական բանակը ծանր պարտության է մատնել մակեդոնական զորքին և ստիպել հաշտություն կնքել:
   գ) 1144 թ. խաչակիրները գրավել են Կոստանդնուպոլիսը և Բյուզանդիայից խլած տարածքների վրա ստեղծել Տրապիզոնի կայսրությունը:
   դ) 1280 թ. Չինգիզ խանի թոռ Խուբիլայ խանը նվաճել է Չինաստանը, իրեն հռչակել համաչինական կայսր և մոնղոլական տերության մայրաքաղաք դարձրել Պեկինը:
   ե) Գերմանական վարձկանների զորահրամանատար Օդոակրը 395 թ. գահընկեց է արել հռոմեական կայսր Հռոմուլոս Ավգուստուլոսին և կայսրությունը բաժանել երկու մասի:
   զ) Իր հեղինակության շնորհիվ՝ Կլիսթենեսը, Ք.ա. 431 թ. սկսած, 15 տարի անընդմեջ ընտրվել է գլխավոր դեմարքոս, այսինքն՝ պետության բարձրագույն գործադիր պաշտոնյա:
   է) 751 թ. Սուասոն քաղաքում Պիպին Կարճահասակը հռչակվել է թագավոր, և Ֆրանկական պետությունում իշխանությունն անցել է Կարոլինգներին:

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)
   ա. Երուսաղեմի թագավորությանը ենթակա խաչակրաց պետություններից 2-ը,
   բ. Նրանց պաշտպանության համար ստեղծված հոգևոր-ասպետական միաբանություններից 2-ը:
9. Աշխատանք **1648 թ.** Եվրոպայի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)



ա. Արևելյան Եվրոպայի այս միացյալ պետական կազմավորումը հյուսիսում դեպի ո՞ր ծով ելք ուներ:
բ. Ո՞ր պետությանն էր պատկանում Բալկանյան թերակղզու զգալի մասը:

10. Հին աշխարհի ո՞ր նշանավոր գործչի դրամն է պատկերված ստորև. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետությունն է ծաղրանկարում պատկերված առյուծի կերպարանքով:
բ. Ո՞վ էր այդ պետության վարչապետը նկարում նկատի առնված իրադարձությունների ժամանակ:
գ. Ո՞վ է ծաղրանկարում պատկերված անձը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

10.03.2021 թ.